

ղեցւոյ առաջին շինութենէն սկսեալ մինչև Խաչակրաց դարը համազգային էր նոյն եկեղեցին եւ է այսօր ալ. հզօր մրցակիցները պիտի ներէի՞ն որ հայերը իրենց սեպհականութիւն դարձնէին զայն: Երուսաղէմի պատմիչ հանգուցեալ Աստուածատուր եպիսկոպոս Տէր Յովհաննէսեան իր գրքին ծանօթագրութեան մէջ (էջ 182, Ա. Հտր.) կը գրէ. Եթէ յոյները Մենդեան եկեղեցիին արձանագրութիւնները չարեհիկ կամ յծածկիկն, ակներեւ պիտի տեսնուէր Հերոսմ բազաւորին գործը, վասն զի խաչակիրներուն հետաւնալով Ս. Տեղիքը մնացին հայ կրօնաւորներու ձեռքը, նկարակերտ դրան հետ շինուեցաւ նաեւ Հերոսմ բազաւորին ծախսով սանտրին փայտակերտ առաստաղը, որուն փայտերը Տարսուսի մէջ տաշել տրուած է եւ որուն կը վկայեն ոչ միայն ազգային աւանդութիւնը, այլ նաեւ գերակաց ձեւը, եւ ակնուրէն փայտի աստղաներու շինուածքը կը հաստատեն թէ ակնով Տարսուսի նախարներուն գործերն են: Հանգուցեալ պատմիչ Արքազանին այս խօսքերը կրնան հաւանական ըլլալ, բայց գրաւոր յիշատակարանի մը պակասութեան պատճառաւ բացարձակ կերպով համոզական չեն կրնար ըլլալ նոյն խօսքերը. և Խաչակրաց մեկնումէն յետոյ Ս. Մենդեան եկեղեցին ազգային սեպհականութիւն նկատել միմիայն քանդակազարդ դրան վերոյ յիշեալ արձանագրութեամբ հնարաւոր չէ, քանի որ դրան սեպհականութիւնը եկեղեցիին սեպհականութիւն չ'ենթագրեր, թէ եւ միւսնոյն ատեն Աստուածատուր Արքազան կը յաւելու (Տե՛ս ակոյ Բ. Հտր. էջ 516) թէ սիւնազարդ գաւիթին մէջ կային հայերէն արձանագրութիւններ և խաչքարեր որ ուրիշներու կողմէն 1842ին ծածկուած են կամ ջնջուած:

Նոյն դրան շինութիւնը կը հանդիպի 1227ին, որ ատեն Գերմանիոյ Ֆրէտէրիկ Բ. կայսրն ամուսնանալով Երուսաղէմի Յովհաննէս թագաւորին ազջկան Եօլանտի հետ, ժառանգ կը դառնար Երուսաղէմի լատին թագաւորութեան գահուն: Հակառակ պապէն բանագրուած ըլլալուն՝ Ֆրէտէրիկ բանակով մը կը գրաւէ Երուսաղէմը, կղերն ու ասպետները թէ եւ ցուրտ ընդունելութիւն մը կ'ընեն կայսեր, բայց ան Ս. Գերեզմանի եկեղեցւոյն մէջ Երուսաղէմի թագաւոր-կայսր կը պսակուի ու Եգիպտոսի էլ-Քամի սուլթանին հետ բանակցութեան մտնելով տասն տարուան դաշնագրութիւն մը կը յաջողի կնքել, օգտուելով սուլթանին և Դաւթապետի իշխողներու անհաշտութենէն: